

ԴԱՍ 3.

Ապաշխարություն

Ներածություն

Բանալի համարներ

ՄԱՍ 3.1 Ինչ է ճշմարիտ ապաշխարությունը

ՄԱՍ 3.2 Ապաշխարության երեք տարրերը

ՄԱՍ 3.2 Ներման գործունեությունը

Հարցեր և կիրառություն

Փրկագնում

Նշումների
համար

Ներածություն

Երկրորդ դասին խոսեցինք մեղքի մասին և մեր կյանքում գործած մեղքի համար Սուրբ Հոգու հանդիմանության մասին: Այո, Սուրբ Հոգին հանդիմանում է մեզ, բայց ինչ պետք է անենք դրանից հետո: Աստվածաշունչը մեզ ցույց է տալիս հաջորդ քայլը՝ **ապաշխարությունը**:

Ապաշխարությունն անհրաժեշտ է.

- Քրիստոնյա դառնալու համար (Գ. Առ. 2:28):
- Քրիստոնեական կյանքը պահպանելու համար (Ա Հովհ. 1:7-9):
- Եկեղեցու շինության և արթնության համար (Հայտ. 2:1-5):

Հունարեն և եբրայերեն բնագրերից ավելի պարզ է դառնում, թե ինչ է նշանակում **ապաշխարություն**: Դա հունարեն **մեթանոիյա** բառն է, որը նշանակում է *մեկ այլ միտք և կամք ունենալ, կամ ըմբռնումով փոխել ընթացքը՝ շրջվել սխալ մտքերից, ծրագրերից և արարքներից*: (Մատթ. 4:7, Մարկ. 1:5):

Եբրայերեն բառերից մեկը, որ թարգմանվում է **ապաշխարություն, շուքն** է, որը նշանակում է *եյր դառնալ, հրաժարվել ինչ-որ բանից*. ապաշխարել մեղքից և դառնալ Աստծուն: (Ա Թագ. 8:47-48, Բ Մն. 7:14, Եզեկ. 14:6):

Այսօր **ապաշխարություն** բառը պարզապես նշանակում է գոջալ կամ էլ ափսոսել ինչ-որ բանի համար: Ըստ Աստվածաշունչի՝ ապաշխարելը ավելի խոր իմաստ ունի, քան պարզապես ցավ ապրելը կամ արածի համար ափսոսելը: **Հիսուսի աշակերպի կյանքում ապաշխարությունը հանդիսանում է առաջին քայլը**:

Բանալի համարներ

Առակ. 28:13 Հովել 2:12–18
 Եզեկ. 18:30–32 Դուկ. 15:7–10
 Ովս. 6:1 Գ. Ա. 2:38, 39, 3:19, 20

Նշումների
 համար

ՄԱՍ 3.1

Ինչ է ձշմարիտ ապաշխարությունը

Ապաշխարությունը մտքի և գործողությունների ամբողջական հեղաշրջումն է.

I) Մենք փոխում ենք մեր մտածելակերպը

Նոր ձևով ենք սկսում հասկանալ մեր էությունը, գիտակցել մեղքի հետևանքներն ու սոսկալիությունը: Գիտակցում ենք, որ մեր մեջ Աստծո հանդեպ խոր թշնամություն կա: Սկսում ենք հասկանալ Աստծո սրբությունը, որը հակադիր է մեր մեղավորությանը:

II) Մենք փոխում ենք մեր վարվեցողությունը

Անհնազանդությունից, եսասիրությունից և ապստամբությունից դառնում ենք Աստծուն:

Մենք պետք է.

- Շրջվենք մեղքից:
- Դառնանք Աստծուն:
- Հանձնենք մեր կյանքը Աստծուն:
- Հիսուս Քրիստոսին ընդունենք մեր կյանքի Տերը:

**Նշումների
համար**

Սա չի վերաբերում միայն մեր կյանքի վատ արարքներին, այլ հաճախ նաև լավ արարքներին: Նույնիսկ, երբ «բարի գործեր» ենք կատարում, մեր *բնական էսք* հնարավոր է դեռ գործի:

Ապաշխարությունը մեր սեփական պատասխանատվությունն է: Բոլորս էլ մեղանշել ենք, և մեղքի պատիժը մահն է: Աստված ավելին չի պահանջում, այդ ամենի հատուցումը կատարվեց խաչի վրա Հիսուսի միջոցով: Այժմ մեզանից է կախված մեր մեղավոր կյանքից ետ դառնալն ու Հիսուսին որպես Տեր և Փրկիչ ընդունելը՝ Սուրբ Հոգու զորությամբ ապրելով Իր հետ:

Գառնալով Աստծուն՝ արձագանքում ենք Նրա սիրուն.

«Սրանով Աստծո սերը երևաց մեզնում, որ Աստված Իր միածին Որդուն ուղարկեց աշխարհ, որ Նրանով կյանք ունենանք: Սրանում է սերը, որ ոչ թե մենք սիրեցինք Աստծուն, այլ Նա սիրեց մեզ և ուղարկեց Իր Որդուն քավություն մեր մեղքերի համար... Սենք սիրենք Նրան, որովհետև առաջ Նա սիրեց մեզ» (Ա Հովհ. 4:9, 10, 19):

ՄԱՍ 3.2**Ապաշխարության երեք տարրերը**Նշումների
համար**I) Ապաշխարությունը ներառում է մեր հասկացողությունը**

Դաս 2-ում եղած *Ինքնաքննության* նպատակը ինչ-որ հասկացություն ձեռք բերելն էր: Ապաշխարել նշանակում է, որ մենք ճանաչում ենք մեր մեղքերը և հասկանում դրանց սոսկալիությունը Սուրբ Աստծո աչքերին: Աստված ցանկանում է, որ տեսնենք, թե որտեղ ենք կանգնած և համեմատենք մեր կյանքերը Իր սրբության հետ: Նա կամենում է Սուրբ Հոգու միջոցով բացահայտել այս ամենը մեր կյանքում: Սա պետք է լինի մեր ամենօրյա կյանքը, հատկապես, երբ «մենիկ պահին» աղոթում և կարդում ենք Աստծո Խոսքը:

II) Ապաշխարությունը ներառում է մեր զգացմունքներն ու հույզերը

Եթե իրապես ճանաչենք մեր վիճակը Աստծո առջև, այն պատճառ կդառնա ուժեղ զգացմունքային պոռթկման (Ես. 6:5), այն կներառի խոր մեղավորության և զղջանքի զգացում (Մաղ. 51:3-9): Մենք կզգանք մեր կյանքում գործած սխալների ծանրությունը: Այս զգացումը իրապես կհեռանա մեզանից միայն այն դեպքում, երբ Աստծո ներումը ստանանք (Բ Կորնթ. 7:9-10): Աստվածային տրտմությունը Սուրբ Հոգու գործելակերպի մի մասն է կազմում, որով հասցնում է մեզ մի տեղ, որտեղ ընդունում ենք Աստծո Խոսքը՝ մեր կյանքը նորոգելու համար:

III) Ապաշխարությունը ներառում է մեր կամքը

Սա իրականում անձի ամբողջ կյանքի, մտքի, նպատակների փոփոխությունն է: Դա մի վիճակից մյուսին անցնելն է: Այն հեղաշրջում է և Աստծո գործության ներքո ամբողջապես նոր կյանքի սկիզբ դնում: Նա ցույց է տալիս մեզ մեր կարիքը և մեր վիճակը Իր առջև, բայց մենք պետք է արձագանքենք այս հայտնությանը և ընտրենք: (Հռ. 2:4, Ա Հովհ. 4:9-10):

Ընտրությունը մերն է:

**Նշումների
համար**

Այս երեք տարրերը գտնում ենք Գուկ. 15:11–32–ում «Անառակ որդու» օրինակում.

- 1–ին տարրը–17 Խոսքը
- 2–րդ տարրը–21 Խոսքը
- 3–րդ տարրը–18, 20ա Խոսքերը

ՄԱՍ 3.3

Ներման գործությունը

Ապաշխարությունը առանձին չի գործում. *ներումը նրա հոգևոր երկվորյակն է:* (Գ. Առ. 3:19, 20, 2:38):

Մենք կարող ենք փորձառաքար ապրել Աստծո զորավոր սիրո մեծությունը: Աստված տվեց իր Որդուն, որպեսզի մենք ներում ստանանք: Դա շատ քանակ էր Իր համար, բայց ահա թե որքան էր Նա մեզ սիրում (Ա Հովհ. 1:7–9): Մեղավորությունից ազատվելու միակ ճանապարհը մեր մեղքերը Աստծո առջև խոստովանելը և դրանք մերժելն է (Առ. 28:13):

Եթե ընդունենք Հիսուսին որպես Տեր և Փրկիչ, ապա Աստված կների մեզ: Խոստովանությունը հաճախ մակերեսային է լինում, առանց ճշմարիտ ապաշխարության և գղջման: Եթե անկեղծորեն խոստովանենք մեր մեղքերը և միևնույն ժամանակ որոշենք հետևել Հիսուսին, Աստված կների մեզ և այլևս չի հիշի մեր մեղքերը: *Նա ջնջում է դրանք* (Միք. 7:18, 19): Մենք այլևս կարիք չենք ունենա մեղավորության զգացումով ապրել, քանի որ Աստված ընդունել է մեզ (Հռովմ. 8:1):

Սաղ. 32–ը պարզ կերպով ցույց է տալիս մեզ, որ *որախությունը և խաղաղությունը* Աստծո ներման պտուղներն են:

Չարքեր և կիրառություններ

1. Ինչո՞ւ է զղջումը մեր անձնական պատասխանատվությունը:
2. Ինչո՞ւ է վտանգավոր ոչինչ չանելով սպասելը, որպեսզի զղջում տեղի ունենա:
3. Ապաշխարությունը ամբողջակա՞ն հեղաշրջում (փոփոխություն) է.
 - փոխում ենք մեր մտածելակերպը,
 - փոխում ենք մեր վարվեցողությունը:
4. Արդյո՞ք քո կյանքում ապրել ես այսպիսի ապաշխարություն:
5. Ե՞րբ կարող ենք ճշմարիտ ձևով ապրել Աստծո ներման խաղաղությունն ու զորությունը: Ինչո՞ւ:
6. Գոյություն ունի՞ քո կյանքում այնպիսի իրավիճակ, որի համար անհրաժեշտ է, որ հենց հիմա զղջաս և ներում խնդրես: Վերանայի՛ր ԴԱՍ 2–ը:

Փրկագնում

Այս բաժնում մենք ուսումնասիրեցինք ապաշխարությունը: Աստված Սուրբ Հոգու միջոցով հանդիմանում է մեզ մեր մեղքերի համար, և մեր պատասխանատվությունն է արձագանքել դրան և զղջալ: Ինչպես տեսանք, այդ ժամանակ Աստված ջնջում է մեր մեղքերը: Խնդիրը կայանում է նրանում, որ հաճախ զգում ենք այդ մեղքի իշխանությունը մեր կյանքում: Կարծես մենք կապված ենք դրանով: Այս պատճառով է, որ կարիք ունենք հասկանալ *փրկագնումը (ազատագրումը) Աստծո զորությամբ*: Դաս 4–ում կուսումնասիրենք *Հիսուսի արյունը*:

Նշումների
համար